


*ՄԱՀԱԳՐԱԿԱՆ
NECROLOGIO*



**ՀԱՆԳԻՍՏ
ՀԱՅՐ ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ
(1939–2010)**

24 Մայիս 2010:

Գարնանային վաղ առաւօտեան, դամասկեան վարդերու բոյրով ողողուած էր Ս. Ղազարի պարտէզը, ուր ժրաջան վանականներ ընտիրն ու ճիշտ ժամանակինը կը հաւաքէին...

Աստուծոյ հրեշտակն ալ շրջելով Ադրիականի լճակին վրայ, իջաւ՝ երանաւէտ հայրենիք առաջնորդելու, երկնային խնճոյքին

հրաւիրելու, դէմ յանդիման Աստուած տեսնելով՝ յաւիտեանս թայլայլելու սերորէահունչ մեղեդիներ, Աստուծոյ փառքը գերներդաշնակութեամբ անդուլ-անդադար հիւսելու, յաւերժական հանգիստի կանչելու...

Հ. Վրթանէս Վրդ. Ուլուհոճեան աչքերը մեղմիկ փակեց այս աշխարհին, անոր ծանրութեան, ցաւին ու վշտին, արթննալու համար ժպտողէմ, Հօր գիրկը, մշտամրմունջ փառաբանութեամբ, որպէս քահանայ յաւիտեան միանալով երկնային դասերուն, եւ յաւերժացնելու հայոց շարականներու քաղցրահունչիւն մեղեդիները:

Ուլուհոճեան Յարութիւնի եւ Պայծառ Անդրիկեանի ընտանիքը եւս մէկ զաւակով երջանկացաւ 1939ի Մարտ 11ին: Յովսէփը ծնաւ գաղթականներու ընտանիքի մէջ, Ֆրանսայի Լիոն քաղաքը:

Փոքրիկ Յովսէփը կը ժամանէ Ս. Ղազար 11 տարեկանին, 1950ի Սեպտեմբեր 8ին, երբ Մխիթարեան միաբանութիւնը մեծաշուք կը տօնախմբէր Աստուածամօր Ծննդեան տօնը. այն՝ միաբանութիւնը Աստուածամօր նուիրելու տօնը կը համարուի: Ամէն ինչ հմայիչ էր, մեծահանդէս ձայնաւոր Ս. Պատարագը կը մատուցանէր Հ. Սրապիոն Աբբահայր Ուլուհոճեանը, որ իր ազգականն էր: Թէ ի՞նչ տպաւորութիւններ գործեցին խնկաբոյր եւ մարախլապատ եկեղեցին, ոսկեման շապիկներն ու շուրջաւոր, քոյցներու խշշոցն ու փուրվառի ամանակաւոր թլնկոցը, վեհաշուք Աբբահայրն ու աւագ սարկաւագները, եւ յատկապէս սարկաւագապետի, որ յիրաւի կոչուած էր Ս. Ղազարի Սոխակը՝ Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանի գեղգեղուն ձայնը:

Անշուշտ տպաւորիչ էր նաեւ վանական միջավայրի մէջ տեսնել սեղանատան հացալից խրախճանքը, ի պատիւ Սուրբ Կոյսին, որ առիթ ու պատճառ, խնամակալ բարեխօս եւ գթաւատ Մայրն էր միաբանութեան:

Դպրոցական կրթութիւնը ստանալէ ետք, 1955ի Հոկտեմբեր 2ին կը ստանայ վանականի սեւ զգեստը, եւ կը փոխադրուի Վարժարան: Յաջորդ տարի 1956 Օգոստոս 11ին կը սկսի Նորընծայութիւնը, որու աւարտին 1957ի Օգոստոս 17ին, Աստուածամօր Վերափոխման տօնին օրը կը կատարէ ժամանակաւոր ուխտերը:

Նոյն տարուայ Հոկտեմբեր 8ին, երկու դասընկերներու հետ կը մեկնի Հռոմ, իմաստասիրական եւ աստուածաբանական

ուսումները կատարելու Գրիգորեան Քահանայապետական համալսարանը, ու եօթ տարի շարունակ, Հ. Հմայեակ Վարդապետ կետիկեանի առաջնորդութեամբ, փայլուն ձեռքբերումներ գրանցելով գերագանցօրէն կ'աւարտէ, ստանալով իմաստասիրութեան եւ աստուածաբանութեան մագիստրոսի կոչում:

Երաժշտական ձիրքերով օժտուած, համալսարանական տարիներուն եկեղեցական երաժշտութեան ընթացքներու ալ հետեւած է, մասնագիտանալով Գրիգորեան երաժշտութեան եւ երգեցողութեան մէջ:

Մշտնջենաւոր ուխտերը եւ վերջնական անդամակցութիւնը Մխիթարեան միաբանութեան հետ կը կատարէ 1963ի Օգոստոս 17ին, Աստուածամօր Վերափոխման տօնին:

1964ի Մարտի 29ին, Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին, երեք դասընկերներով քահանայական ձեռնադրութիւն կը ստանան Հ. Սրապիոն եպիսկոպոս Ուլուհոճեան Աբբահօրմէ:

Որոշ շրջան մը մայրավանքի մէջ ծառայելէ ետք, երկար տարիներ պաշտօնավարած է Փարիզի Սամուէլ Մուրատեան Վարժարանէն ներս, ինչպէս նաեւ Վենետիկի Մուրատ Ռափայէլեան Վարժարանի մէջ ստանձնած է տարբեր պատասխանատու պաշտօններ:

1980ականներու սկզբին, մեծաւորները Ս. Ղազար կը կանչեն զինք, եւ տարբեր հանգրուաններով ու հանգամանքներով միաբանութեան կը մատուցանէ իր ծառայութիւնը մատակարարական ոլորտէն ներս:

Միեւնոյն ատեն, իրեն կը յանձնուի վանական կեանքի եւ հայ կերպարի վկայութեան առաւել պատասխանատու գործերէն մէկը, այցելուներու հիւրընկալութիւնը: Տարբեր ազգերէ, տարբեր մշակոյթներէ, տարբեր լեզուներով, տարբեր տարիքի խումբեր թէ անհատներ, կլոր տարին կը ժամանեն Վենետիկ եւ կ'այցելեն Ս. Ղազար, որպէս հռչակաւոր հայոց կղզին, տեսարժան՝ իր թանգարանով, գրադարանով եւ գեղանկարներով:

Հ. Վրթանէս վարդապետ, ամէն օր, ժամը 3-5, ժպիտը դէմքին, պատրաստ է բացատրական շրջապտոյտը վարելու, տարբեր լեզուներով: Մուտքին ընդունելով հիւրերը, նախաբանով մը կ'անցնի քառանկիւնէն եւ եկեղեցի կ'առաջնորդէ բոլորին, ուր այցելուներուն տեղաւորելով նստարաններու վրայ, կը դասախօսէ հաշուուած վայրկեաններու մէջ հայոց պատմութիւն,

հայ եկեղեցւոյ պատմութիւն, Մխիթարեան միաբանութեան պատմութիւն, ծէսի մասին երկու խօսք եւ ի վերջոյ շարականի մը կենդանի կատարումով կ'աւարտէ իր ելոյթը, հրաւիրելով դէպի թանգարան: Մանուկներու հանդէպ յատուկ գորով, մեծերու եւ պաշտօնատար անձերու հետ անմիջական ու սիրալիր, բազմազար գրօսաշրջիկներու մօտ տպաւորուած կը մնայ այդ կարճահասակ, ճաղատ, խիտ մօրուքով վանականը, որ միշտ կը կատակէր ըսելով, թէ տիպար օրինակ է հայոց շիկահեր, բարձրահասակ եւ կապուտաչեայ արիական ցեղին:

Միաժամանակ, որպէս Դասապետ կարգուած Հ. Հմայեակ Աբբահօրմէն, ծիսական արարողութիւնները կը պայծառացնէ իր գեղգեղուն ձայնով, հայ Եկեղեցւոյ շարականներու վանական աւանդական եղանակներու նախանձախնդիր կատարողութեամբ, պահպանելով եւ փոխանցելով յաջորդ սերունդներուն:

Այս մտահոգութիւնն է, որ մղեց զինք յանձն առնելու, թէեւ արդէն վատառողջ, երբեմն նոյնիսկ ցաւագար, արդիագոյն միջոցներով ձայնագրել հայ աւանդութեան այս գոհարները: Այն ինչ որ կ'արձանագրուէր սերուններու սրտի եւ ականջի յիշողութեան մէջ, հիմա ունինք խտասկաւառակներու վրայ դրոշմուած, յաջորդ սերունդներուն եւ բոլոր հետաքրքրուողներուն տրամադրելի:

Աւողջական վիճակի կտրուկ անկման հետեւանքով հիւանդանոց տեղափոխուելով, բժիշկները յայտնաբերեցին բարորակ ուռուցք գլխուղեղի մէջ, որ սակայն շատ մեծցած էր եւ կը ճնշէր ուղեղին վրայ: Երկարատեւ վիրահատութենէ ետք, կեանքը երկարեցաւ, սակայն անշարժացած, անուսասյլակի վրայ կամ անկողնային վիճակով:

Շուրջ երկու տարի եղբայրակիցներու ջերմ ու գուրգուրոտ խնամքով ապրեցաւ կեանքի վերջալոյսը Ս. Ղազարի մէջ, եւ 71 տարեկան հասակին, 2010 Մայիս 24ին, աւանդեց աստուածահաճոյ հոգին Վենետիկի Ս. Յովհաննէս եւ Ս. Պօղոս հիւանդանոցը, ուր տեղափոխուած էր վերջին օրերու աւողջական վիճակի ծանրացման պատճառով:

Հողին յանձնուեցաւ Ս. Ղազար վանական գերեզմանոցին մէջ, Հինգշաբթի, 27 Մայիս 2010ին, եղբայրակիցներու, հայ համայնքի ներկայացուցիչներու եւ նախկին սաներու հոծ բազմութեան աղօթքներով:

*Եկեղեցւոյ կամարները առ այսօր կ'արձագանգեն Հ. Վրթա-
նէս Վրդ.ի ձայնով*

Ողջո՛յն քեզ սուրբ եկեղեցի. ողջո՛յն քեզ սեղան սրբութեան,
ողջո՛յն ձեզ դասք քահանայութեան.
Ես քանապարհողեցի առ արարիչն իմ:

Ողջո՛յն ձեզ մանկունք եկեղեցւոյ, ողջո՛յն ձեզ հաւատացեալ
եղբարք իմ ի Քրիստոս, ողջո՛յն ձեզ համօրէն ժողովուրդք,
Ես քանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն:

Հ. ՍԵՐՈՒ ՉԱՄՈՒՐԼԵԱՆ